

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

2018թ. ապրիլի 1-ի դրությամբ ըստ հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի (մասնաճյուղերի) (այսուհետ բանկեր) կողմից ներկայացրած հաշվետվությունների, վարկերը կազմել են 150873.5 մլն դրամ և 2017թ. ապրիլի 1-ի համեմատ աճել են 31299.7 մլն դրամով կամ 26.2 տոկոսով, իսկ 2017թ. հունվարի 1-ի համեմատ աճել են 847.8 մլն. դրամով կամ 0.6 տոկոսով: Վարկերի 0.3 տոկոսը կազմել են բանկերի ժամկետանց վարկերը:


2018թ. ապրիլի 1-ի դրությամբ առևտրային բանկերի վարկային ներդրումները (դրամով և տարադրամով) կազմել են 150204.9 մլն դրամ և 2017թ. ապրիլի 1-ի նկատմամբ աճել են՝ 31610.7 մլն դրամով կամ 26.7 տոկոսով:

2018թ. ապրիլի 1-ի դրությամբ արտարժույթով տրամադրված վարկային ներդրումների ծավալը կազմել է 84163.6 մլն դրամ կամ ընդամենը վարկային ներդրումների 56.0 տոկոսը: Արտարժույթով վարկավորման ծավալները 2017թ. ապրիլի 1-ի նկատմամբ աճել են՝ 4398.7 մլն դրամով կամ 5.5 տոկոսով:

Առևտրային բանկերի վարկերի կազմը

		/մլն դրամ/							
		01.04. 2017թ.	01.01. 2018թ.	01.04. 2018թ.	Տոկոսներով ընդամենի նկատմամբ			Աճի տեմպը, %	
					01.04. 2017թ.	01.01. 2018թ.	01.04. 2018թ.	01.04. 2017թ. նկատմամբ	01.01. 2018թ. նկատմամբ
1.	Վարկեր, ընդամենը	119573.8	150025.7	150873.5	100.0	100.0	100.0	126.2	100.6
1.1	Վարկային ներդրումներ այդ բոլորում՝	118594.2	149255.4	150204.9	99.2	99.5	99.6	126.7	100.6
	կարճաժամկետ որից՝								
	հայկական դրամով	47626.2	31176.8	34664.8	39.8	20.8	23.0	72.8	111.2
	տարադրամով	24913.2	13932.6	23180.8	20.8	9.3	15.4	93.0	166.4
	երկարաժամկետ որից՝	22713.0	17244.2	11484.0	19.0	11.5	7.6	50.6	66.6
	հայկական դրամով	70968.0	118078.6	115540.1	59.4	78.7	76.6	162.8	97.9
	տարադրամով	13916.1	48070.0	42860.5	11.7	32.0	28.4	308.0	89.2
		57051.9	70008.6	72679.6	47.7	46.7	48.2	127.4	103.8
1.2	Բանկերի ժամկետանց վարկերի ծավալը	716.7	467.0	403.0	0.6	0.3	0.3	56.2	86.3
	կարճաժամկետ	212.5	90.2	88.5	0.2	0.1	0.1	41.6	98.1
	երկարաժամկետ	504.2	376.8	314.5	0.4	0.2	0.2	62.4	83.5
1.3	Բանկերի երկարաձգված վարկերի ծավալը	262.9	303.3	265.6	0.2	0.2	0.1	101.0	87.6
	կարճաժամկետ	-	247.9	226.0	-	0.2	0.1	-	91.2
	երկարաժամկետ	262.9	55.4	39.6	0.2	0.0	0.0	15.1	71.5

Առևտրային բանկերի վարկերի ճյուղային կառուցվածքը (տոկոսներով)



2018թ. ապրիլի 1-ի դրությամբ արդյունաբերությունում իրականացված վարկավորումը կազմել է 13134.5 մլն դրամ (2017թ. ապրիլի 1-ի համեմատ նվազել է 41.4 տոկոսով), գյուղատնտեսությունում՝ 1657.8 մլն դրամ (աճել է 83.4 տոկոսով), շինարարությունում՝ 3335.6 մլն դրամ (աճել է 72.4 տոկոսով), առևտրում՝ 2049.8 մլն դրամ (նվազել է 64.0 տոկոսով) և այլ ճյուղերում՝ 130695.8 մլն դրամ (աճել է 47.4 տոկոսով):

Ըստ տնտեսության հատվածների 2018թ. ապրիլի 1-ի դրությամբ վարկերի 37.6 տոկոսը տրամադրվել է կազմակերպություններին, 13.0 տոկոսը՝ տնային տնտեսություններին, 33.1 տոկոսը՝ շահույթ չհետապնդող և 16.3 տոկոսը՝ այլ ֆինանսական կազմակերպություններին, 2017թ. ապրիլի 1-ի դրությամբ համապատասխանաբար՝ 39.5 տոկոսի, 14.6 տոկոսի, 36.1 տոկոսի և 9.8 տոկոսի փոխարեն:

Առևտրային բանկերի վարկերը, ըստ տնտեսության հատվածների

		01.04.2017թ.	01.01.2018թ.	01.04.2018թ.	/մլն դրամ/		
					Տոկոսներով ընդամենի նկատմամբ		
					01.04.2017թ.	01.01.2018թ.	01.04.2018թ.
1.	Վարկերը, ըստ տնտեսության հատվածների	119573.8	150025.7	150873.5	100.0	100.0	100.0
	<i>Ոչ ռեզիդենտներին</i>	<i>1.5</i>	<i>0.3</i>	<i>1.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>	<i>0.0</i>
	Դրամով	-	0.3	0.3	-	0.0	0.0
	Արտարժույթով	1.5	-	0.7	0.0	-	0.0
2.	Ռեզիդենտներին	119572.3	150025.4	150872.5	100.0	100.0	100.0
	Դրամով	39518.3	62432.2	66419.8	33.1	41.6	44.0
	Արտարժույթով	80054.0	87593.2	84452.7	66.9	58.4	56.0
	այդ թվում՝						
	Կազմակերպություններին	47173.2	58325.4	56664.7	39.5	38.9	37.6
	<i>Դրամով</i>	<i>10004.3</i>	<i>14145.8</i>	<i>14613.6</i>	<i>8.4</i>	<i>9.4</i>	<i>9.7</i>
	Մասնավոր	5427.6	9255.8	8914.2	4.6	6.2	5.9
	Պետական	4576.7	4890.0	5699.4	3.8	3.2	3.8
	Արտարժույթով	37168.9	44179.6	42051.1	31.1	29.5	27.9
	Մասնավոր	19943.2	32941.4	33429.8	16.7	22.0	22.2
	Պետական	17225.7	11238.2	8621.3	14.4	7.5	5.7
	Տնային տնտեսություններին	17485.9	19223.9	19563.0	14.6	12.8	13.0
	Դրամով	12198.2	13706.9	13101.5	10.2	9.1	8.7
	Արտարժույթով	5287.7	5517.0	6461.5	4.4	3.7	4.3
	Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	43180.1	49019.4	49964.8	36.1	32.7	33.1
	Դրամով	17315.8	23929.5	24150.2	14.5	16.0	16.0
	Արտարժույթով	25864.3	25089.9	25814.6	21.6	16.7	17.1
	Այլ ֆինանսական կազմակերպություններին	11733.1	23456.7	24680.0	9.8	15.6	16.3
	Դրամով	-	10650.0	14554.5	-	7.1	9.6
	Արտարժույթով	11733.1	12806.7	10125.5	9.8	8.5	6.7

Տնային տնտեսություններին տրամադրված վարկերը 2018թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմել են 19563.0 մլն դրամ, ընդ որում 7.6 տոկոսը կազմել են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով տրված վարկերը՝ 92.4 տոկոսը՝ սպառողական նպատակով տրամադրված վարկերը: 2018թ. ապրիլի 1-ի դրությամբ տնային տնտեսություններին տրամադրված վարկերը նախորդ տարվա ապրիլի 1-ի համեմատ աճել են 11.9 տոկոսով, իսկ 2018թ. հունվարի 1-ի համեմատ՝ 1.8 տոկոսով:

2018թ. ապրիլի 1-ի դրությամբ ներգրավված ավանդները կազմել են 102519.4 մլն դրամ և 2017թ. ապրիլի 1-ի դրությամբ աճել են 33.9 տոկոսով, իսկ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 2.3 տոկոսով: Ավանդների ընդհանուր կառուցվածքում 81.1 տոկոսը պատկանում է ռեզիդենտներին, 18.9 տոկոսը՝ ոչ ռեզիդենտներին, ընդ որում ռեզիդենտների կողմից ներգրավված ավանդների 17.2 տոկոսը ցայսօր կազմել են, 82.8 տոկոսը՝ ժամկետային:

Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների

		01.04.2017թ.	01.01.2018թ.	01.04.2018թ.	/մլն դրամ/		
					Տոկոսներով ընդամենի նկատմամբ		
					01.04.2017թ.	01.01.2018թ.	01.04.2018թ.
	Ավանդների գումարը (մնացորդը), ըստ տնտեսության հատվածների	76582.4	100196.7	102519.4	100.0	100.0	100.0
1	Ոչ ռեզիդենտներին	16259.7	19721.7	19334.1	21.2	19.7	18.9
1.1	արտարժույթով	12633.0	11677.1	11027.3	16.5	11.7	10.8
1.2	դրամով	3626.7	8044.6	8306.8	4.7	8.0	8.1
2	Ռեզիդենտներին	60322.7	80475.0	83185.3	78.8	80.3	81.1
2.1	Դրամով	45449.7	59464.2	61725.6	59.4	59.3	60.2
	Ցայսօր (ներառյալ հաշիվները)	9352.8	13063.4	11764.0	12.2	13.0	11.5
	Կազմակերպություններին	4264.0	6525.0	5851.2	5.5	6.5	5.7
	Մասնավոր	3390.1	5596.8	4745.9	4.4	5.6	4.6
	Պետական	873.9	928.2	1105.3	1.1	0.9	1.1
	Տնային տնտեսություններին	4633.8	6065.5	5411.9	6.1	6.1	5.3
	Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	410.0	423.9	430.4	0.5	0.4	0.4
	Այլ ֆինանսական կազմակերպություններին	45.0	49.0	70.5	0.1	0.0	0.1
	Ժամկետային	36096.9	46400.8	49961.6	47.2	46.3	48.7
	Կազմակերպություններին	1438.7	3571.0	2053.3	1.9	3.6	2.0
	Մասնավոր	1433.2	3291.0	1773.4	1.9	3.3	1.7
	Պետական	5.5	280.0	279.9	0.0	0.3	0.3
	Տնային տնտեսություններին	29797.4	37350.2	42399.7	38.9	37.3	41.3
	Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	60.8	679.6	713.6	0.1	0.7	0.7
	Այլ ֆինանսական կազմակերպություններին	4800.0	4800.0	4795.0	6.3	4.7	4.7
2.2	Արտարժույթով	14873.0	21010.8	21459.7	19.4	21.0	20.9
	Ցայսօր (ներառյալ հաշիվները)	1289.3	2416.5	2559.5	1.7	2.4	2.4
	Կազմակերպություններին	452.3	1643.2	1494.1	0.6	1.6	1.4
	Մասնավոր	421.1	1254.1	1366.4	0.6	1.2	1.3
	Պետական	31.2	389.1	127.7	0.0	0.4	0.1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


	01.04. 2017թ.	01.01. 2018թ.	01.04. 2018թ.	Տոկոսներով ընդամենի նկատմամբ		
				01.04.2017թ.	01.01.2018թ.	01.04.2018թ.
				Տնային տնտեսություններին	755.0	704.9
Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	68.5	66.3	423.8	0.1	0.1	0.4
Այլ ֆինանսական կազմակերպություններին	13.5	2.1	4.5	0.0	0.0	0.0
Ժամկետային	13583.7	18594.3	18900.2	17.7	18.6	18.5
Կազմակերպություններին	4061.2	8883.5	8804.3	5.3	8.9	8.6
Մասնավոր	3964.3	3974.9	3941.8	5.2	4.0	3.9
Պետական	96.9	4908.6	4862.5	0.1	4.9	4.7
Տնային տնտեսություններին	8448.8	9143.9	9533.8	11.0	9.1	9.3
Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	1073.7	566.9	562.1	1.4	0.6	0.6
Այլ ֆինանսական կազմակերպություններին	-	-	-	-	-	-

Բանկերում ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների մնացորդը 2018թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմել է 102519.4 մլն դրամ և 2017թ. ապրիլի 1-ի համեմատ աճել է 25937.0 մլն դրամով կամ 33.9 տոկոսով: Այս ցուցանիշը 2018թ. հունվարի 1-ի համեմատ աճել է 2322.7 մլն դրամով կամ 2.3 տոկոսով:


Ֆիզիկական անձանց ավանդների քանակը, գումարը, գումարի միջին չափը

	առ 01.04.2017թ.	առ 01.01.2018թ.	առ 01.04.2018թ.	Աճի տեմպը, %	
				01.04.2017թ նկատմամբ	01.01.2018թ նկատմամբ
Ավանդների քանակը <i>այդ թվում՝</i>	158754	133869	141054	88.9	105.4
ցպահանջ	140747	112119	121358	86.2	108.2
ժամկետային	6766	10652	7835	115.8	73.6
նպատակային՝ երեխաների համար	11241	11098	11861	105.5	106.9
Ավանդների գումարը (մնացորդը), մլն դրամ <i>այդ թվում՝</i>	43635.0	53264.5	57982.6	132.9	108.9
ցպահանջ	5388.8	6770.4	6049.1	112.3	89.3
ժամկետային	32325.7	40642.3	45633.0	141.2	112.3
նպատակային՝ երեխաների համար	5920.5	5851.8	6300.5	106.4	107.7
Ավանդների միջին չափը, հազ. դրամ <i>այդ թվում՝</i>	274.9	397.9	411.1	149.5	103.3
ցպահանջ	38.3	60.4	49.8	130.0	82.5
ժամկետային	4777.7	3815.5	5824.3	121.9	152.6
նպատակային՝ երեխաների համար	526.7	527.3	531.2	100.9	100.7

Ֆիզիկական անձանց ավանդների գումարի կառուցվածքը 2018թ. ապրիլի 1-ի դրությամբ (%)





Առևտրային բանկերի վարկերը և ավանդները ըստ արժույթի տեսակների (մլն դրամ)



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Առևտրային բանկերի վարկերի և ավանդների կառուցվածքը ըստ արժույթի տեսակների (%)



ԱՀ բանկային համակարգի հաճախորդների թիվը 2018թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմել են 109715 անձ, որից ֆիզիկական անձինք՝ 105062, իրավաբանական անձինք՝ 4653: Նրանց հաշիվների քանակը կազմել է 174037, որից ֆիզիկական անձանց հաշիվները՝ 164192, իրավաբանական անձանց հաշիվները՝ 9845:

ԱՀ բանկային համակարգում հաճախորդների և նրանց հաշիվների քանակը

	առ 01.04.2017թ.	առ 01.01.2018թ.	առ 01.04.2018թ.
Ընդամենը հաճախորդներ	116531	99611	109715
<i>այդ թվում՝</i>			
իրավաբանական անձինք	13714	4727	4653
ֆիզիկական անձինք	102817	94884	105062
Ընդամենը հաշիվներ	174230	170963	174037
<i>այդ թվում՝</i>			
իրավաբանական անձանց	10524	10449	9845
ֆիզիկական անձանց	163706	160514	164192

ԱՀ տարածքում գործող առևտրային բանկերի վարկերի միջին տոկոսադրույքները 2018թ. ապրիլի 1-ի դրությամբ տատանվում են 12.8 տոկոսից մինչև 18.5 տոկոսի շրջանակում, ավանդների միջին տոկոսադրույքները՝ 7.0 տոկոսից մինչև 13.1 տոկոսի շրջանակում:

2018թ. հունվար-մարտին շահույթով աշխատած բանկերի շահույթը կազմել է 3804.3 մլն դրամ, իսկ վնասով աշխատած բանկերի վնասը՝ 500.1 մլն դրամ:

Բանկային գործունեության հիմնական ցուցանիշները

	2017թ. հունվար-մարտ	2018թ. հունվար-մարտ	<i>/մլն դրամ/ Աճի տեմպը, տոկոսով</i>
Տոկոսային եկամուտներ	5555.6	5954.0	107.2
Տոկոսային ծախսեր	2271.6	2654.6	116.9
Չուտ տոկոսային եկամուտներ	3284.0	3299.4	100.5
Ոչ տոկոսային եկամուտներ	626.4	305.6	48.8
Ոչ տոկոսային ծախսեր	2091.3	2085.7	99.7
Չուտ ոչ տոկոսային եկամուտներ	-1464.9	-1780.1	121.5
Հատկացումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	2216.4	675.7	30.5
Պահուստներին կատարված մասհանումների վերադարձ	1040.1	2460.6	2.4անգ.
Չուտ մասհանումներ	1176.3	-1784.9	x
Շահույթ մինչև հարկվելը	642.8	3304.2	5.1անգ.

*ՀՀ բանկային համակարգում դրամարկղային շրջանառությունը**

	2017թ. հունվար-մարտ	2018թ. հունվար-մարտ
Մուտքեր	1 311 202.7	1 515 277.5
Ծախսեր	1 320 879.1	1 526 204.8
Ծախսերի գերազանցումը մուտքերի նկատմամբ	9 676.4	10 927.3

* Ներառված է ներբանկային դրամարկղային շրջանառությունը

ՀՀ ֆինանսական շուկայի տոկոսադրույքները*

(%)

	2018թ.		
	հունվար	փետրվար	մարտ
Առևտրայի բանկերի գործառնությունների տոկոսադրույքները			
վարկեր ¹	13.85	14.19	13.20
ավանդներ ¹	8.82	8.73	8.39
ՀՀ կենտրոնական բանկի ռեպո գործառնությունների տոկոսադրույքները	6.00	6.00	6.00

* Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների

Հանրապետությունում ոչ բանկային կազմակերպությունների կողմից իրականացված փոխառությունները

/մլն դրամ/

	2017թ.	2018թ.	Տոկոսներով,	
	հունվար-մարտ	հունվար-մարտ	ընդամենի	նկատմամբ
Փոխառությունները ընդամենը	9682.2	10859.1	100.0	100.0
այդ թվում՝				
կարճաժամկետ	1857.7	976.2	19.2	9.0
որից՝				
հայկական դրամով	1797.5	976.2	18.6	9.0
տարադրամով	60.2	-	0.6	-
երկարաժամկետ	7824.5	9882.9	80.8	91.0
որից՝				
հայկական դրամով	6852.0	8518.2	70.8	78.4
տարադրամով	972.5	1364.7	10.0	12.6

Փոխառությունները, ըստ տնտեսության հատվածների

/մլն դրամ/

	2017թ.	2018թ.	Տոկոսներով,	
	հունվար-մարտ	հունվար-մարտ	ընդամենի	նկատմամբ
Փոխառությունները, ըստ տնտեսության հատվածների	9682.2	10859.1	100.0	100.0
1. Ոչ ռեզիդենտներին	-	-	-	-
Դրամով	-	-	-	-
Արտարժույթով	-	-	-	-
2. Ռեզիդենտներին	9682.2	10859.1	100.0	100.0
Դրամով	8649.5	9494.4	89.3	87.4
Արտարժույթով	1032.7	1364.7	10.7	12.6
այդ թվում՝				
Կազմակերպություններին	5696.4	5185.0	58.8	47.8
Դրամով	5157.0	4754.1	53.2	43.8
Մասնավոր	3984.8	3634.0	41.1	33.5
Պետական	1172.2	1120.1	12.1	10.3
Արտարժույթով	539.4	430.9	5.6	4.0
Մասնավոր	184.9	206.9	1.9	1.9
Պետական	354.5	224.0	3.7	2.1
Տնային տնտեսություններին	3917.9	5203.5	40.5	47.9
Դրամով	3492.5	4740.3	36.1	43.6
Արտարժույթով	425.4	463.2	4.4	4.3
Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	67.9	470.6	0.7	4.3
Դրամով	-	-	-	-
Արտարժույթով	67.9	470.6	0.7	4.3
Այլ ֆինանսական կազմակերպություններին	-	-	-	-
Դրամով	-	-	-	-
Արտարժույթով	-	-	-	-

Փոխառությունները, ըստ տնտեսության ճյուղերի

/մլն դրամ/

	2017թ.	2018թ.	Տոկոսներով,	
	հունվար-մարտ	հունվար-մարտ	ընդամենի	նկատմամբ
Փոխառությունները, ըստ տնտեսության ճյուղերի ընդամենը	9682.2	10859.1	100.0	100.0
արդյունաբերություն	351.1	1155.8	3.6	10.6
գյուղատնտեսություն	2800.5	2155.7	28.9	19.8
շինարարություն	295.5	465.0	3.1	4.3
առևտուր	1003.4	1178.5	10.4	10.9
այլ ճյուղեր	5231.7	5904.1	54.0	54.4

¹ Հաշվարկված է մինչև մեկ տարի ժամկետով միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):